19521.

1882

371.5
G - 39

Հ. Աստվերյան

(7)

ԸՆԹԵՑԱՆՈՒՄ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԿԱՐԳԱԴՐԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԿՈՂՄԻՑ։

ՀԱՐՑԵՐ

12001

ԹԻՖԼԻՍ
ՏԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
ՕՐԲԵԼԵՐՆ ՓՈՂՈՑ, 5
1882

371.5
Ը-39

2010

371.5
С-39
8438
ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
370
Имени А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2156-ՀԱ

ԱՊԱԳԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՐԳԱԴՐԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

Ընդհանուր ուսուցչական ժողովին մասնակցող ուսուցիչների գործը մասամբ դիւրացնելու նպատակով, Կարգադրիչ Յանձնաժողովը հրատարակում է մի շարք հարցերի, որոնք վերաբերում են աշակերտների յառաջադիմութեանը, դաստիարակութեանը, նոյնպէս և ուսումնարանական կարգապահութեանը։ Յանկալի էր, որ այդ հարցերը ոչ միայն մշակուէին մանկավարժական ժողովներում, այլ և մասնաւոր անհատների կողմից։ Թէ մանկավարժական ժողովներում մշակուած հարցերի բովանդակութիւնը և թէ մասնաւոր անձանց կարծիքները Կարգադրիչ Յանձնաժողովը խնդրում է մինչև օգոստոսի 1-ը հասցնել իրան, ինչպէս որ հրատարակուած է ներկայ թուի «Մշակ» № 13 և «Մեղուի» № 2 մէջ։

Ծրագիրներին, առարկաների դասաւանդութեան մեթոդիկային և ձեռնարկներին վերաբերեալ հարցերը թողնվում է ծրագիրների հետ տալու։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչ մեթոդական կանոններով ուսուցիչը աշակերտներին պէտք է դաս տայ և դաս պահանջէ (դասի ժամա-

նակ հարցերը բաժանել, պատմելը պահանջել, աշակերտին պատմելիս օգնել, խնդիրը լուծելիս օգնել, ուսման նիւթի մշակելն և այլն):

2. Ի՞նչպէս պէտք է նախապատրաստել աշակերտի տնային աշխատութիւնները և ինչ չափով պէտք է լինեն նոքա:

3. Աշակերտի բաց թողած դասերը ինչպէս պէտք է լրացնել:

4. Ի՞նչպէս պէտք է որոշել աշակերտի ծուլութիւնը և անընդունակութիւնը. ինչ միջոցներ պէտք է գործ դնել մէկի առաջն առնելու և միւսի պակասը լրացնելու:

5. Երբ աշակերտը դասը չի իմանում, ինչ պատճառներ կարող են յարգելի համարուիլ:

6. Ի՞նչ արտաքին և ներքին պատճառներ կարող են խանգարել աշակերտի ուշադրութիւնը: Ի՞նչ հանգամանքներում անուշադրութիւնը կարող է ներելի կամ աններելի համարուիլ:

7. Աշակերտի դասերից դուրս կատարուելիք ընթերցանութիւնը ինչպէս պէտք է կանոնաւորել (մանկական գրադարաններ, հաշիւ կարդացածի, գրքերի ընտրութիւն և այլն):

8. Ուսումնարանի շրջակայքում գտնուած զարգացնող հաստատութիւններից կամ պատմական յիշատակներից ինչպէս պէտք է օգուտ քաղել (մուզէում, պատկերների հաւաքածու, կենդանաբանական և բուսաբանական այգիք, աւերակներ և այլն):

9. Մի դասատան մէջ աշակերտների թիւը հրքանից աւելի չը պէտք է լինի:

10. Կարևոր է արդեօք թուանշանների գործածութիւնը, և եթէ կարևոր է, ինչպէս պէտք է նոքա գործադրուին:

11. Տարեկան հարցաքննութեանց հը եղանակը ամէնից յարմարն է մեր ուսումնարանների համար (քաղուածք, հրապարակական, մասնաւոր, կրկնողական, տոմսակներով և այլն):

12. Կարևոր է արդեօք պարգևաբաշխութիւնը. եթէ կարևոր է, երբ (հանդիսաւոր առիթներում, թէ ամբողջ տարուայ ընթացքում): Պարգևաբաշխութեան նիւթը ինչ պէտք է լինի:

13. Տարուայ ընթացքում ինչպէս պէտք է կրկնել ուսման նիւթը:

14. Մի աշակերտ երբ ուսման ընթացքում քանի անգամ երկու տարի կարող է մնալ որևիցէ դասատանը և ինչ դէպքերում կարելի է բացառութիւն անել:

15, Կարելի է աշակերտին տարուայ ընթացքում մի դասատնից միւսը տեղափոխել:

16. Ի՞նչ միջոցներով պէտք է զարգացնել աշակերտի մէջ սէր և համակրութիւն դէպի ուսումնարանը:

17. Ի՞նչ տեսակ յարաբերութիւն պէտք է լինի ուսուցչի և աշակերտի մէջ (մասնաւոր գործեր յանձնել, տանը ծառայեցնել, բարև տալ և բարև առնել և այլն):

18. Ի՞նչ միջոցներ պէտք է գործ դնէ ուսումնարանը իւր սաների ծնողաց հետ սերտ յարաբերութիւն պահելու և գլխաւորապէս ինչ նպատակի համար:

19. Կարևոր են արդեօք մանկավարժական խորհրդի կողմից պարբերական ընթերցանութիւններ աշակերտների համար (մարդասիրութեան, ընկերասիրութեան, երախտագիտութեան և այլն ոգի զարգացնելու նպատակով) և եթէ կարևոր են, ինչ կերպով կարելի է հեշտութեամբ նպատակի հասնել:

20. Ձմեռային և ամառնային արձակուրդների ժամանակ կարելի է աշակերտներին թոյլ տալ մանկական ներկայացումներ տալու և, եթէ կարելի է, ով պէտք է առաջնորդէ նոցա:

21. Աշակերտը երբ կարող է թատրոն յաճախել և ում հետ պէտք է յաճախէ:

22. Ո՞ր հասակից սկսած կարելի է աշակերտին թոյլ

տալ լրագիրները կարդալ և ինչպիսի լրագիրներ։ Ի՞նչ հանգամանքներում կարող է աշակերտը մասնակցել հասարակական գործերի (բարեգործական նպատակով տուած երեկոներին, ներկայացումներին, թաղման, խնջույքներին և այլն)։

23. Կարո՞ղ է աշակերտը հրապարակական ճառեր խօսել և եթէ կարող է, ինչ դէպքերում։

24. Ո՞ր պիսի տոներ ուսումնարանը պէտք է հանդիսաւոր կերպով տօնէ։

25. Ուսումնարանը պէտք է տօնէ՞ արդեօք այն տօները, որ տեղական ժողովուրդը տօնում է։

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Հարկաւո՞ր են արդեօք դասատան դաստիարակները տղայոց ուսումնարանների համար և ինչ է լինելու նոցա պարտականութիւնը։

2. Օրիորդաց ուսումնարանների դասատան վարժուհիները միայն վերակացուհի՞ պաշտօն կատարելու են, թէ նոյնպէս դաստիարակի։

3. Ուսումնարանը պէտք է ունենա՞յ վերակացու, ո՞ր ուսումնարանները պէտք է ունենան և ինչ է լինելու նոցա պարտականութիւնը։

4. Ի՞նչ միջոցներ պէտք է գործ դնել աշակերտներին մաքրասիրութեան մէջ վարժեցնելու (գրքեր, տետրակներ, հագուստը և այլն մաքուր պահելու համար)։

5. Հարկաւո՞ր են արդեօք պաշտօն ունեցող աշակերտները դասատան և ուսումնարանի մէջ և, եթէ հարկաւոր են, ինչպիսի պաշտօն կարող են ունենալ (օրապահ, վերակացու, ծառայութիւն ուսումնարանի համար և այլն)։

6. Ի՞նչ միջոցներ պէտք է գործ դնել, որ աշակերտները որքան կարելի է դասերից սակաւ բացակայ լինին։

7. Դաս սկսուելուց յառաջ ինչ պէտք է անուն ստանին դասատանց աշակերտների ուշադրութիւնը նախապատրաստելու (ձեռքերը բարձրացնել, ուսուցչին նայել, շարժմունք և այլն)։

8. Դասատան մէջ ինչ տեղ պէտք է նստի կամ կանգնի ուսուցիչը. (նա իր ուշադրութիւնը միայն պատասխանողի՞, թէ ամբողջ դասատան վերայ պէտք է դարձնէ և այլն)։

9. Ի՞նչ միջոց հարկաւոր է գործ դնել իմանալու համար, թէ աշակերտները ուսուցչի պատմածը, հարցրածը, դասը և այլն հասկանում են թէ ոչ։

10. Ի՞նչ բաներ պէտք է կատարուին խմբովին (գրքեր հանելը, բաժանելը, դուրս գնալը, ինչ ուսման նիւթ և այլն)։

11. Հարկաւո՞ր է արդեօք պատիժը և, եթէ հարկաւոր է, ինչպիսի պատիժներ կարելի է գործ դնել դասի ժամանակ և դասից դուրս։ Պատիժ նշանակելուց յետոյ կարելի՞ է աշակերտին ներել և ո՞վ կարող է ներել։

12. Ի՞նչպիսի խաղեր կարելի է թոյլ տալ աշակերտներին (տեղական, եւրոպական և այլն)։ Պէ՞տք է արդեօք խաղերը առաջնորդել և ինչ ստիճանի։

13. Կարևո՞ր են աշակերտական ցնշատակարանները և, եթէ կարևոր են, ինչպէս պէտք է կազմուած լինին նոքա։

14. Աշակերտների եկեղեցի յաճախելը ինչպէս պէտք է կանոնաւորել (նոցա մէջ բարեպաշտական զգացմունքները զարգացնելու համար)։

Կարգադրիչ Ցանձնաժողովը կարևոր համարած է հրատարակել նոյնպէս հետևեալ հարցերը, որոնք վերաբերում են ուսուցիչների նիւթական ապահովութեան, ուսումնա-

բաններին և ուսումնարանական վարչութեանց։ Այս հարցերի պատասխանները և մշակութիւնը շատ ցանկալի էր ուսումնարանական գործին հմուտ և համակրող անձանց կողմից։

Այս տեսակ հարցերի քննութիւնը ընդհանուր ուսուցչական ժողովի իրաւասութեան սահմանից դուրս լինելով, այնու ամենայնիւ Կարգադրիչ Ցանձնաժողովը նոցա կարգի բերելով՝ կ՚առաջարկէ Ընդհ. Ժողովի կողմից ընտրուած մի մասնաժողովի դիտողութեանը և ապա կ՚առաջարկէ ուր հարկն է ի գիտութիւն։

---

1. Ի՞նչպիսի ուսումնարաններում անհրաժեշտ են մանկավարժական խորհուրդները, ինչ պէտք է լինի նոցա նշանակութիւնը, նոցա խորհրդակցութեան նիւթը և ինչ կանոնների պէտք է նոքա ենթարկուին (արձանագրութիւնները կազմելը, վիճաբանութիւններ և այլն)։

2. Ի՞նչ միջոցներով կարելի է իրագործել և ապահովել մի մանկավարժական թերթ (ուսուցչաց զարգացմանը և ուսումնարանական գործին շարունակ նպաստելու համար)։

3. Ո՞րչափ ժամանակ ուսուցիչը կարող է բացակայ լինել դասերից առանց զրկուելու իւր ռոճկից և ինչ դէպքերում։

4. Ուսումնարանը ինչպէս կարող է նպաստել ուսուցչին (կամ նորա ընտանեաց), քանի՞ տարի ծառայելուց յետոյ և ինչ եղանակաւ։

ա) Կարելի՞ է կազմել խնայողական գանձարաններ (բոլոր ուսումնարանաց, թէ իւրաքանչիւր թեմի, քաղաքի, գործակալութեան և այլն). գոցանից ո՞ր և ինչպէս կարելի է իրագործել։

բ) Ուսումնարանների վարչութիւնները չէ՞ն կարող արդեօք ուսումնարանի տարեկան եկամուտից մի որոշեալ տոկոս նշանակել ուսուցիչների ապագան ապահովելու համար։

գ) Ուսումնարանների տարեկան ծախսից նախահաշիւներից մնացած գումարների մի մասը չէ՞ր կարելի արդեօք գործ դնել յօգուտ ուսուցիչների ապահովութեան։

5. Ուսուցիչների և դպրոցների վարչութեանց մէջ ծագած դժգոհութեանց առաջն առնելու համար ինչ միջոցներ պէտք է գործ դնել։

6. Ի՞նչպիսի տեղում (քաղաքի և գիւղի) պէտք է կանգնած լինի ուսումնարանի շէնութիւնը և ինչ տեսակ շէնք պէտք է լինի նա առողջապահական կէտից նայելով։

7. Ի՞նչպիսի կահ կարասիք պէտք է ունենայ ուսումնարանը։

8. Ի՞նչ հոգս պէտք է քաշուի ուսումնարանում աշակերտաց ֆիզիքական կրթութեան համար (գիմնաստիքա և այլն)։

9. Ի՞նչպէս է կարելի կազմակերպել ուսուցչական և աշակերտական գրադարանները։ Ո՞վ պէտք է ընտրէ գրադարանների համար գրքերը։

10. Եթէ ուսումնարանը չի կարող իւր գրադարանն ունենալ, կարելի՞ է արդեօք այդ պակասը լրացնել շարժական գրադարաններ կազմելով։

11. Լաւ չէ՞ր լինի արդեօք, որ աշակերտներին հարկաւոր թէ գրքերը և թէ դասական պիտոյքները ինքը ուսումնարանը հոգար։ Եթէ այդ հարկաւոր է, ինչ միջոցներով կարելի է հեշտութեամբ իրագործել։

12. Հարկաւո՞ր է արդեօք աշակերտների (և աշակերտուհիների) հագուստի մէջ միաձևութիւնը։

13. Ի՞նչպէս պէտք է կանոնաւորել թոշակ առնելու հարցը։

14. Ի՞նչ յարաբերութիւն պէտք է լինի թեմական և ծխական ուսումնարանների մէջ ծրագրի նկատմամբ:

15. Կարևոր են խառն դպրոցները (փոքր տղայոց և աղջկերանց համար) և, եթէ կարևոր են, ի՞նչպէս կարելի է զարգացնել և ընդհանրացնել նոցա:

16. Ի՞նչ հանգամանքներում կարևոր են գիշերօթիկ ուսումնարանները. ի՞նչ տեսակ կարող են լինել նոքա և ի՞նչպէս պէտք է պահուին:

17. Մի ուսուցիչ ունեցող ուսումնարանում, ուսուցչի հիւանդութեան պատճառով ուսման կանոնաւոր ընթացքը չը խանգարելու համար ի՞նչ միջոցներ կարելի է գործ դնել:

18. Ո՞րքան ժամանակ պէտք է տևէ ամէն մի դասը առանձին և օրական քանի դաս պէտք է լինի: Ի՞նչպէս պէտք է բաժանուին զանազան առարկաների դասատուութեան ժամերը օրուայ և շաբաթուայ վերայ: Դասատուութիւնը կարող է լինել և ճաշից յետոյ:

19. Ի՞նչ աստիճանի և ի՞նչ կերպով հասարակութիւնը պէտք է ուսումնարանը նիւթապէս ապահովացնէ:

20. Հասարակութիւնը ի՞նչ աստիճանի մասնակցութիւն պէտք է ունենայ դպրոցի գործերում:

21. Կարևոր չէ՞ արդեօք, որ թեմական վերատեսուչները անդամ լինին թեմական դպրանոցների մանկավարժական խորհուրդներին:

ՄԵՏՍԻԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ. Публичная Библиотека
7/XI. 1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ. 13 Марта 1882 г.
Типографія И. Мартиросіанца. Орбеліан. ул., 5

2013
<< Ազգային գրադարան >>
NL0053458